ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/125Ա

23/02/2018

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն 2018 թվականի հունվարի 24-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել.

- 10,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 100,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, և
- 500,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով

արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն 2018 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 7 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 2018 թվականի հունվարի 24-ին ներկայացված.
   - 10,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 100,000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, և
   - 500,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով

   արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼԵՎՈՆ ԵՐԻՑՅԱՆ